որոշեցին ճակատամարտի ելքը՝ ծանր կորուստներ պատճառելով հայ-վրացական բանակին[41]։

Սկզբնաղբյուրները ճակատամարտը միաբերան թվագրելով 1225-ով, փոքր-ինչ տարբեր են նշում ամիսը։ Իբն ալ-Ասիրը ճակատամարտը դնում է հիջրայի 622 թ. շաբան ամսին[42] (1225 թ. օգոստոսի 8—սեպտեմբերի 5), սակայն ան-Նասավին այն ավելի վաղ ժամանակով է թվագրում։ Ըստ նրա, Ջալալ ադ-Դինը Դվինից Թավրիզ է մեկնել հիջրայի 622 թ. ռաջաբ ամսին[43] (1225 թ. հուլիսի 9—օգոստոսի 7), հետևաբար մինչև այդ իրադարձությունը տեղի ունեցած Գառնիի ճակատամարտը, համաձայն խորեզմշահի կենսագրի հաղորդումների, ընկնում է հուլիսին կամ օգոստոսի սկզբին։ Այս ժամանակագրական տվյալները գայթակղեցուցիչ եզրակացություն են հուշում՝ ճակատամարտը թվագրել ռաջաբի և շաբանի սահմանագծային օրերով՝ օգոստոսի 7—8-ով, սակայն Իբն ալ-Ասիրի հստակ ցուցումները հարկադրում են մերժել նման վարկածը։ Պատմիչի տեղեկությունների համաձայն, Ջալալ ադ-Դինը Մարաղան գրավել է 1225 թ. հուլիսին, հիջրայի 622 թ. ռաջաբ ամսի 17-ին (1225 թ. հուլիսի 25)՝ տիրել Թավրիզին[44] և այնուհետև արշավել Հայաստան ու Վրաստան։ Այս հյուսկեն ժամանակագրությունը հաստատվում է Իկոնիայի սուլթան Ալա-ադ-Դին Քեյ-Կուբադին Ջալալ ադ-Դինի հղած ուղերձի տվյալներով, որի բնագիրը պահպանվել է Իբն Բիբիի աշխատությունում։ Այն գրվել է հիջրայի 622 թ. Ջումադ Բ ամսի վերջին[45] (1225 թ. հուլիսի սկիզբ), որից հետո միայն պետք է տեղի ունենային հետագա իրադարձությունները։ Եթե 1225 թ. հուլիսի սկզբին Ջալալ ադ-Դինը դեռևս Մարաղայում էր, ապա միանգամայն աներևակայելի է, որ նա հասցներ, հենց ըստ ան-Նասավիի տեղեկությունների, Մարաղայից մեկնել Ուջան, այնուհետև 7-օրյա պաշարումից հետո գրավեր Թավրիզը և մինչև հուլիսի 9-ը ներխուժել Հայաստան ու բանակել Գառնիի մոտ[46]։ Թվում է, որ, այնուամենայնիվ, ան-Նասավիի տեղեկությունները նկատառելի են այն՝ իմաստով, որ հուշում են ճակատամարտը թվագրել ոչ թե Իբն ալ-Ասիրի վկայած շաբան ամսվա վերջով, այսինքն՝ սեպտեմբերի առաջին օրերով, այլ օգոստոսով, ավելի հավանական է վերջին օրերով։

Այսպիսով, սկզբնաղբյուրների վերստին քննությունը հնարավորություն է ընձեռում ճշգրտել Գառնիի ճակատամարտի ժամանակը[47], մոտավոր ճշտու-

---

41 ան-Նասավին զոհվածների թիվը համարում է 4 հազար (ан-Насави, с. 158), իսկ Իբն ալ-Ասիրը այդ թիվը հասցնում է 20 հազարի (Ибн ал-Асир, с. 157).

42 Ибн ал-Асир, с. 156.

43 ан-Насави, с. 159.

44 Ибн ал-Асир, с. 155.

45 ан-Насави, с. 359, прим. 2.

46 Նույն տեղում, էջ 154—157։ Ջ. Բունիաթովը Թավրիզի գրավման մասին հաղորդումը (հիջրայի 622 թ.) կոնկրետացրել է՝ փակագծերում ավելացնելով «ռաջաբի 17» (նույն տեղում, էջ 156)։ Բնագրի մեջ, ըստ Իբն ալ-Ասիրի տեղեկությունների, նման հավելում մտցնելը սխալ և ավելորդ է, քանի որ երկու պատմիչների հաղորդումները ժամանակագրական առումով զգալիորեն տարբերվում են և դրանով արհեստական հակասություն է ստեղծվում ան-Նասավիի աշխատությունում։

47 Լ. Բաբայանը, վկայակոչելով Կիրակոս Գանձակեցու և Իբն ալ-Ասիրի տեղեկությունները, Գառնիի ճակատամարտը դնում է 1225 թ. սեպտեմբերի կեսերին (Լ. Բաբայան, նշվ.